ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Արտակարգ իրավիճակ կարող է առաջանալ ցանկացած պահի, ուստի դրա արդյունավետ հաղթահարման հիմնական պայմանն է նախապես պատրաստ լինելը:

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ համար պատրաստված լինելն առավել կենսական է, քանի որ այն ոչ միայն ապահովում է ինքնապաշտպանության հնարավորություն, այլև նպաստում է արագ կողմնորոշվելու և համապատասխան գործողություններ կատարելու կարողության զարգացմանը:

Անվտանգությունը յուրաքանչյուր մարդու հիմնարար իրավունքն է և պետք է լինի հասանելի բոլորի համար՝ անկախ խոչընդոտներից:

Հիշի՛ր. քո ուժը միայն քո կարողություններում չէ, այլև՝ քո իրազեկվածության մեջ:



Եկե՛ք միասին կառուցենք բոլորի համար անվտանգ միջավայր ԵՎ Արտակարգ իրավիճակներին դիմակայող հասարակություն:

112 rescue.mia.gov.am

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ

ՓՐԿԱՐԱՐԻ ՁԵՌՔԵՐԸ՝ ՁԵՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔԸ



ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Արտակարգ իրավիճակների ժամանակ հատուկ կարիքներ ունեցող անձինք կարող են բախվել լրացուցիչ խոչընդոտների: Պետք է գնահատել նրանց կարիքները և պլանավորել քայլեր տվյալ պայմաններում:

Գործողությունների պլանավորումը հատկապես կարևոր է տարեցների և հատուկ կարիքներ ունեցող անձանց համար: Հնարավորության դեպքում պետք է պատրաստ լինել ինքնուրույն գործելուն՝ մինչև համապատասխան ծառայությունների ժամանումը:

ՊԱՏՐԱՍՏ ԵՂԻՐ. ՊԱՀԻՐ ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՈՒՍԱԿ

- Ջուր և չփչացող սնունդ
- Դեղամիջոցներ
- Փրկության ուղեցույց
- Անհրաժեշտ այլ իրեր

ԼՍՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵ՞Ք

Ներառեք լսողական սարքի լրացուցիչ մարտկոցներ, ինչպես նաև թուղթ և մատիտ՝ հաղորդակցման համար:

ՏԵՍՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵ՞Ք

Դասավորեք ձեր անձնական պարագաները ձեզ հարմար ձևով: Պահեք ձեռնափայտը անկողնու մոտ: Եթե ունեք ուղեկցող կենդանի, պատրաստեք նրա համար փաթեթ՝ սննդով և ջրով:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒ՞Մ ԵՔ ԱՆՎԱՍԱՅԼԱԿ

Ներառեք անվադողերի նորոգման հավաքածու և պահեք մեխանիկական անվասայլակ՝ որպես պահուստային տարբերակ:

ՓՐԿՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

«Փրկության ուղեցույցը» ձևաթուղթ է, որտեղ հավաքագրված են քո մասին կարևոր տեղեկություններ՝ փրկարարների արագ հասանելիության համար:

- **Լրացրեք ձևաթուղթը և ստորագրեք**
- **Պահեք բնօրինակը դրամապանակում**
- **Պահեք պատճեն առաջին անհրաժեշտության պայուսակում**

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՆՑ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

- Եթե կարող եք՝ իջեք հատակին, մտեք ամուր ծածկի տակ և մնացեք տեղում, մինչև ցնցումները դադարեն:

- Հեռու մնացեք պատուհաններից:
- Եթե դժվար է իջնել հատակին, ապա՝
  1. Մնացեք տեղում, մի՛ փորձեք տեղափոխվել մինչև ցնցումները չավարտվեն:
  2. Անվասայլակ օգտագործելիս՝ կողպեք անիվները:
  3. Պաշտպանեք գլուխն ու պարանոցը ձեռքերով կամ այլ առկա իրով մինչև ցնցումների ավարտը:



- Մտածեք այլ տարբերակներ ձեր պաշտպանության համար:
- Համոզվեք, որ ունեք վստահելի ընկեր կամ հարևան, ով անհրաժեշտության դեպքում կօգնի ձեզ:

ԱՆՎՏԱՆԳ ՏԱՐԱՀԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՑ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ

- ✓ Նախապես պլանավորեք տարհանման ուղին՝ աստիճաններով կամ թեքահարթակներով իջնելու համար: Ճանաչեք նաև պահեստային ելքերը:
- ✓ Նախապես որոշեք, թե ով կօգնի ձեզ տարհանման ժամանակ և կտեղեկացնի ձեր գտնվելու վայրի մասին:
- ✓ Հնարավորության դեպքում անցկացրեք փորձնական տարահանում ընկերների և հարևանների հետ:
- ✓ Պլանավորեք, թե ում հետ կապ կհաստատեք, եթե օգնության կարիք ունենաք տարհանման ժամանակ:
- ✓ Պահեք սուլիչ բանալիների վրա կամ ձեր առաջին անհրաժեշտության պայուսակում, որպեսզի մարդիկ կարողանան ձեզ գտնել, եթե չկարողանաք խոսել կամ տեղաշարժվել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Այս ձևաթուղթը պարունակում է կարևոր տեղեկություններ՝ արտակարգ իրավիճակներում արագ արձագանքի համար: Լրացրեք ձևաթուղթը, պահեք բնօրինակը դրամապանակում, պատճենը՝ առաջին անհրաժեշտության պայուսակում: Ձեր կյանքը կարող է կախված լինել այս տեղեկատվության հասանելիությունից:

Անձնական տվյալներ

Անուն և ազգանուն	
Սեռ	
Ծննդյան ամսաթիվ	____ / ____ / _____ (օր / ամիս / տարի)
Հեռախոսահամար	(+374) _____
Հանրային ծառայությունների համարանիշ	

Բժշկական տվյալներ

Արյան խումբ և ռեզուս	
Հիմնական բժշկի անուն և ազգանուն	
Բժշկի հեռախոսահամար	(+374) _____

Առողջական խնդիրներ՝ նշեք համապատասխան տարբերակները

- ☐ Սիրտանոթային հիվանդություն
- ☐ Էպիլեպսիա
- ☐ Ինսուլտ (գլխուղեղի կաթված)
- ☐ Շաքարային դիաբետ
- ☐ Բրոնխային ասթմա
- ☐ ՄԻԱՎ/ՁԻԱՀ
- ☐ Քաղցկեղ
- ☐ Այլ _____

Ունեք դեղամիջոցների նկատմամբ ալերգիա: Եթե այո, նշեք ցանկը:

1 _____ 2 _____ 3 _____